ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
22.04.2026 թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/37
գնման պայմանագրի

ք. Երևան «30» «07» 2026 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՍՈՒՍ ՇԻՆ» և «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊ ընկերությունները (համատեղ) (այսուհետև՝ Կապալառու), որոնք գործում են համաձայն 27.03.2026 թվականի կոնսորցիումի պայմանագրի, ի դեմս «ԱՐՍՈՒՍ ՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Դ.Հայրապետյանի և «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊ ընկերության տնօրեն Ա.Սարգսյանի, որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների հիման վրա, (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև կողմեր), ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 22.04.2026 թվականին կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/37 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.16 կետերը, ինչպես նաև **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության** վարչության գրության կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի՝ **Երևանի կենդանաբանական այգու տարածքում ոռոգման ցանցի կառուցման** աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 78900000 (յոթանասունութ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Հաստատել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված թիվ 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«ԱՐՍՈՒՍ ՇԻՆ» ՍՊԸ	«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	Ք.Գավառ Քալաշյան 4	Արարատի մարզ
ՀՀ ֆինանսների նախարարության	Արդշինբանկ ԲԲԸ	Գ.Շահումյան, Արցախի 5
գործառնական վարչություն	Հ/Հ 2475908460250000	Ակբա բանկ ԲԲԸ
Հ/Հ 900012410552	ՀՎՀՀ 08428808	Հ/Հ 220013333657000
ՀՎՀՀ 02593108		ՀՎՀՀ 04225743
Վ.Պապիկյան----------(ստորագրություն)	Դ.Հայրապետյան----------(ստորագրություն)	Ա.Սարգսյան----------(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
22.04.2026թ. կնքված թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/37 պայմանագրի
«30» «07» 2026 թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	45231126/504	Երևանի կենդանաբանական այգու տարածքում ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներ	...	...	...	...	...	...	...	30000000	40000000	78900000	78900000	78900000	78900000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900012410552
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՐՍՈՒՍ ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե ք. Գավառ Քալաշյան 4
Բանկ Արդշինբանկ ԲԲԸ
Հ/Հ 2475908460250000
ՀՎՀՀ 08428808

Դ.Հայրապետյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ
Հասցե Արարատի մարզ,
գ. Շահումյան, Արցախի 5
Բանկ Ակբա բանկ ԲԲԸ
Հ/Հ 2200133336570000
ՀՎՀՀ 04225743

Ա.Սարգսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Արդշինբանկ

№ 1971 - 10910

«29» 07 2026 թ.

ԵՐԱՇԽԻՔ N ՀԲԵՀ26/236-59
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԱՐՍՈՒՍ ՇԻՆ» ՍՊԸ-ի (համատեղ պրինցիպալ՝ «Արտ Պլաս» ՍՊԸ) (այսուհետ միասին՝ պրինցիպալ) միջև 22.04.2026թ.-ին կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/37 պայմանագրից և դրա շրջանակներում կնքվելիք N 1 համաձայնագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Արդշինբանկ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 10,672,042.0 (տասը միլիոն վեց հարյուր յոթանասուներկու հազար քառասուներկու) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև 30.06.2028թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ vachagan.mejunc@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/37 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՓՄՁ վարկերի կենտրոնացված
ձևակերպումների բաժնի պետի ժ/պ՝ Հովիկ Նիկողոսյան

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ
«ARDSHINBANK» OJSC
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ
HEAD OFFICE
02566492 20029

ՀՀ, 0015, ք. Երևան, Գր. Լուսավորչի փող., 13
(+374 12) 222222 / office@ardshinbank.am / ardshinbank.am

Արդշինբանկ

№ 1971-10911

«29» 07 2026 թ.

ԵՐԱՇԽԻՔ N ՀԲԵՀ26/237-59
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/37 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի «ԱՐՍՈՒՍ ՇԻՆ» ՍՊԸ-ի (համատեղ պրինցիպալ՝ «Արտ Պլաս» ՍՊԸ) (այսուհետ միասին՝ պրինցիպալ) կողմից 22.04.2026թ.-ին կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/37 պայմանագրով և դրա շրջանակներում կնքվելիք N 1 համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «Արդշինբանկ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 32,016,126.0 (երեսուներկու միլիոն տասնվեց հազար մեկ հարյուր քսանվեց) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև 30.06.2027թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ vachagan.mejunc@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/37ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՓՄՁ վարկերի կենտրոնացված
ձևակերպումների բաժնի պետի ժ/պ՝ Հովիկ Նիկողոսյան

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ
«ARDSHINBANK» OJSC
ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HEAD OFFICE
02566492 20029

ՀՀ, 0015, ք. Երևան, Գր. Լուսավորչի փող., 13
(+374 12) 222222 / office@ardshinbank.am / ardshinbank.am